# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2024թ. N 584-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆԱՀԻՏ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ և 30-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 51-րդ կետի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի N 19-Ա որոշումը, N 04072024-07-0099 սեփականության վկայականը, Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 1 շենք 6 բնակարանի բնակիչ Անահիտ Երվանդի Խոնդկարյանի 2024 թվականի ապրիլի 11-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին փողոց 1/13 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 30.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը 60251,4 (վաթսուն հազար երկու հարյուր հիսունմեկ ամբողջ չորս տասնորդական) դրամով և դրա զբաղեցրած 0.00306 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման (ծածկագիր՝ 07-003-0026-1027) հողամասը 135919,08 (մեկ հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր տասնինը ամբողջ ութ հարյուրերրորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Անահիտ Երվանդի Խոնդկարյանին (ծնված՝ 1962 թվականի հուլիսի 01-ին):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Անահիտ Երվանդի Խոնդկարյանի կողմից:

4.Անահիտ Երվանդի Խոնդկարյանը պարտավոր է Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202064 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման համար ծառայության վճար:

5.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ժորայի Ղազարյանին (անձնագիր՝ AV 0661399, տրված՝ 2023 թվականի մարտի 03-ին 059-ի կողմից, ծնված՝ 1980 թվականի հոկտեմբերի 12-ին)՝ կատարել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող քաղաք Բյուրեղավան 1-ին փողոց 1/13 հասցեում գտնվող 30.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա զբաղեցրած 0.00306 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 1 շենք 6 բնակարանի բնակիչ Անահիտ Երվանդի Խոնդկարյանի՝ օտարելու հետ կապված գործարքներ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 08
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2024թ. N 585-Ա

## ՎԱԼԵՐԻԿ ՄԻՇԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Վալերիկ Միշիկի Հակոբյանին անգործունակ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի մարտի 15-ի թիվ ԿԴ/14574/02/22 քաղաքացիական գործի օրինական ուժի մեջ մտած վճիռը, Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի N 03 արձանագրությունը և Իրինա Ահարոնի Հակոբյանի 2024 թվականի հունիսի 05-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված Վալերիկ Միշիկի Հակոբյանի (ծնված՝ 1986 թվականի հուլիսի 14-ին, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան, Կոտայքի փողոց, 35 շենք, 10 բնակարան) նկատմամբ սահմանել խնամակալություն և որպես խնամակալ ճանաչել մորը՝ Իրինա Ահարոնի Հակոբյանին (ծնված՝ 1964 թվականի փետրվարի 29-ին, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան, Կոտայքի փողոց, 35 շենք, 10 բնակարան)։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 08
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2024թ. N 586-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ (ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգն ու «Ֆրակցիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի գրությունը՝ ***որոշում եմ.***

1.2024 թվականի հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 9-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրում սահմանված կարգով կազմակերպել «Ֆրակցիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացվող՝ Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղում գտնվող 07-055-0212-0087 կադաստրային ծածկագրով հողամասում լիթոիդային պեմզայի հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարացման վերաբերյալ հանրային քննարկումներ:

2. Լսումներն անցկացնել 2024 թվականի օգոստոսի 9-ին, ժամը 18:00-ին, Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում. հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց թիվ 13 վարչական շենք:

3.Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Բորիկ Դավթյանին՝
1) անցկացնել հանրային քննարկումները.
2) արդյունքների մասին ներկայացնել տեղեկություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 08
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հուլիսի 2024թ. N 587-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Սյուզաննա Սլավիկի Հովսեփյանի լիազորած անձ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան Կարինե Օվչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի սեպտեմբերի 08-ի «Բնակարանը սեփականաշնորհելու մասին» թիվ 15 որոշման 4-րդ կետի «գ» ենթակետում «Սլավայի» բառը փոխարինել «Սլավիկի» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2024թ. N 588-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Սերգեյ Բորիսի Դալլաքյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սերգեյ Բորիսի Դալլաքյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Տնաշինական թաղամասի 13-րդ փողոց թիվ 39 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0144-0021, սեփականության վկայական N 14122021-07-0049) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամասի 9-րդ փողոց 42:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 10
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2024թ. N 589-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14$^{3}$-րդ և 30-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 51-րդ կետի, 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի N 19-Ա որոշումը, N 10072024-07-0020 սեփականության վկայականը, Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 16 շենք 1 բնակարանի բնակիչ Նորայր Ռաֆիկի Մարտիրոսյանի 2024 թվականի ապրիլի 01-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 41/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 53.5 քմ արտաքին մակերեսով քանկեի տունը 268516,5 (երկու հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր տասնվեց ամբողջ հինգ տասնորդական) դրամով, 18.3 քմ արտաքին մակերեսով խորդանոցը 61231,8 (վաթսունմեկ հազար երկու հարյուր երեսունմեկ ամբողջ ութ տասնորդական) դրամով և դրանց զբաղեցրած 0.06531 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման (ծածկագիր՝ 07-003-0013-0053) հողամասը 1885826,25 (մեկ միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր քսանվեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Նորայր Ռաֆիկի Մարտիրոսյանին (ծնված՝ 1968 թվականի հունվարի 03-ին):

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Նորայր Ռաֆիկի Մարտիրոսյանի կողմից:

4.Նորայր Ռաֆիկի Մարտիրոսյանը պարտավոր է Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202064 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման համար ծառայության վճար:

5.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ժորայի Ղազարյանին (անձնագիր՝ AV 0661399, տրված՝ 2023 թվականի մարտի 03-ին 059-ի կողմից, ծնված՝ 1980 թվականի հոկտեմբերի 12-ին)՝ կատարել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող քաղաք Բյուրեղավան Կոտայից փողոց 41/1 հասցեում գտնվող 53.5 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 18.3 քմ արտաքին մակերեսով խորդանոցը և դրանց զբաղեցրած 0.06531 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 16 շենք 1 բնակարանի բնակիչ Նորայր Ռաֆիկի Մարտիրոսյանին օտարելու հետ կապված գործարքներ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 11
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2024թ. N 590-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 33-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Ավագ Աշոտի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ավագ Աշոտի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34/76 (վկայական N 10052024-07-0135, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0037-0055) հողամասի առանձնացվող մասերին տրամադրել հասցեներ՝

1) 66.95 քառակուսի մետր մակերեսով առանձնացվող մաս 1-ին՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34/76.

2) 67.05 քառակուսի մետր մակերեսով առանձնացվող մաս 2-ին՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34/79.

3) 67.05 քառակուսի մետր մակերեսով առանձնացվող մաս 3-ին՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34/81:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեների գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 11
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2024թ. N 591-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԹԱԳՅՈՒԼ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ2/0127/02/13 քաղաքացիական գործով վճիռը, չափագրման հատակագծերը ու Վարթագյուլ Հովսեփի Ղազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Վարթագյուլ Հովսեփի Ղազարյանին պատկանող Կոտայքի մարզի Նուռնուս գյուղում գտնվող հողամասին և շինությանը (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0019-0002-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 2-րդ փողոց 10/1:

2 Քաղաքացի Վարթագյուլ Հովսեփի Ղազարյանին պատկանող (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ2/0127/02/13 քաղաքացիական գործով վճիռը) Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 2-րդ փողոց 10/1 հասցեում գտնվող շինության սպասարկման համար փաստացի օգտագործվող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության

0.06 հեկտար մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը համարել վերականգնված՝ համաձայն «ԴԱՏՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմած հատակագծի:

3.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:

4.Վարթագյուլ Հովսեփի Ղազարյանին՝ համայնքապետարանի 900105202171 հաշվեհամարին վճարել 1126620 (մեկ միլիոն հարյուր քսանվեց հազար վեց հարյուր քսան) դրամ՝ հողամասի՝ վճարման պահին գործող կադաստրային արժեքը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 11
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հուլիսի 2024թ. N 592-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՍՈՍՈ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14$^{3}$-րդ և 30-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 51-րդ կետի, 2020 թվականի հունիսի 4-ի № 1023-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի N 19-Ա որոշումը, N 10072024-07-0024 սեփականության վկայականը, Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 60/3 հանրակացարանի 93 բնակարանի բնակիչ Սոսո Գեորգիի Աղաջանյանի 2023 թվականի հոկտեմբերի 26-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/7 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 19.47 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը 38336,43 (երեսունութ հազար երեք հարյուր երեսունվեց ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) դրամով և դրա զբաղեցրած 0.001947 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման (ծածկագիր՝ 07-003-0020-1143) հողամասը 86481,846 (ութսունվեց հազար չորս հարյուր ութսունմեկ ամբողջ ութ հարյուր քառասունվեց հազարերորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Սոսո Գեորգիի Աղաջանյանին (ծնված՝ 1963 թվականի հուլիսի 02-ին) :

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Սոսո Գեորգիի Աղաջանյանի կողմից:

4.Սոսո Գեորգիի Աղաջանյանը պարտավոր է Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202064 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հացցեի տրամադրման համար ծառայության վճար:

5.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ժորայի Ղազարյանին (անձնագիր՝ AV 0661399, տրված՝ 2023 թվականի մարտի 03-ին 059-ի կողմից, ծնված՝ 1980 թվականի հոկտեմբերի 12-ին)՝ կատարել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/7 հասցեում գտնվող 19.47 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա զբաղեցրած 0.001947 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 60/3 հանրակացարանի 93 բնակարանի բնակիչ Սոսո Գեորգիի Աղաջանյանին օտարելու հետ կապված գործարքներ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 11
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2024թ. N 593-Ա

## ԳՅՈՒԼՆԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 138-րդ և 139-րդ կետերի, հիմք ընդունելով չափագրման հատակագծերն ու Գյուլնարա Արզումանի Սարգսյանի լիազորած անձ Երվանդ Ֆրիկի Շուշանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Գյուլնարա Արզումանի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0175 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-003-0031-1031, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024PCBFTA) կառուցված 2 (երկու) հարկանի հասարակական սպասարկման օբյեկտի համար տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն, N 10 ավարտական ակտը կցվում է):

2.Գյուլնարա Արզումանի Սարգսյանին՝ համայնքապետարանի 900105202163 հաշվեհամարին վճարել 20000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության ձևակերպման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 12
ք. Բյուրեղավան